ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ԵՐԳՉՈՒՀԻ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՆԿԱՐԻՉ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ հայ արվեստի բազմավաստակ մշակներ Գոհար Գասպարյանին և Հակոբ Հակոբյանին Հայ Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ մեծապես արժեվորելով նրանց հայրենանվեր գործունեությունը: Գնահատանքի խոսքեր ասացին նաև արվեստագետ Շահեն Խաչատրյանը և Տիգրան Լևոնյանը՝ անդրադառնալով երկու նվիրյալների ստեղծագործական ուղուն և հայ երգարվեստին ու գեղանկարչությանը բերած իրենց մեծ ավանդին:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին և Նորին Սրբության ձեռամբ տիկին Գ. Գասպարյանին և տիար Հ. Հակոբյանին հանձնվեցին Հայրապետական սրբապատառ կոնդակները: «Ուրախ ենք հաստատել, որ Ձեր երգացանկում հատուկ տեղ են գրավել հայ հոգևոր երաժշտության գանձերը, որոնք Դուք սովորել եք դեռևս Ձեր ծննդավայրում, հայ կյանքի ավանդույթներով հարուստ Եգիպտոսում՝ մանուկ հասակից երգելով եկեղեցու դպրաց դասում: Ձեր երգը հնչել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպես աղոթք ու փառաբանություն առ Բարձրյալն Աստված, Ով Իր առատ օրհնությամբ պարգևել է Ձեզ երգչուհու տաղանդն ու շնորհները»,- նշված է հանրահռչակ հայ երգչուհուն ուղղված Հայրապետական կոնդակում (տե՛ս էջ 16):

«Գեղանկարչության բարձունքները նվաճած Ձեր կտավները անուն ու ճանաչում են բերում Ձեզ և հռչակ հավելում հարուստ ու հինավուրց մշակույթ ունեցող մեր ժողովրդին, որի արժանավոր և շնորհաշատ զավակն եք Դուք՝ Ձեր հոգում միշտ կրելով քրիստոնյա մեր ժողովրդի արժեքներն ու հայրենի ժառանգությունը: Տասնամյակներ շարունակ նշանավոր տարբեր քաղաքների հանրահայտ թանգարաններում ցուցադրվող Ձեր նկարները ծառայում են հոգևորի զորացմանը մարդկանց սրտերում և բարու արգասավորմանը աշխարհում»,- ասվում է 80-ամյակի առիթով բազմավաստակ նկարչին շնորհված Հայրապետական կոնդակում (տե՛ս «Էջմիածին», Զ, էջ 10):

Պարգևատրելով երկու նվիրյալներին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով՝ Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բաշխեց ներկաներին:

«Հանդիսությունը որքան որ նպատակ է հետապնդում գնահատանքի արժանացնելու այն ծառայությունը, որ իրենք մատուցել են մեր ժողովրդին մշակույթի ասպարեզում, նույնքան նաև արտահայտելու մեր՝ հոգևորականներիս երախտագետ զգացումները, որ դժվարին տարիներին, երբ արգելված էր հոգևոր քարոզչությունը մեր կյանքում, նրանք հասա-

ռական կյանքից ներս սպրեցրին, զորացում, զարգացում պարգևեցին ու հնչեցրեցին հոգևոր մեր արժեքները»,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Իրենց երախտագիտության խոսքը Վեհափառ Հայրապետին ուղղեցին նաև շքանշանակիր վարչապետ Գոհար Գասպարյանը և Հակոբ Հակոբյանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար տիկ. Թամարա Պողոսյանը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ճաղեյ Սարգսյանը և մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության գեղարվեստական մասում հոգեզմայլ կատարումներով հանդես եկան Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ
Է ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅ ԵՐԳԸ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ
ԱՇԽԱՐՀԻ ԲԵՄԵՐԻՑ ՀՆՉԵՑՐԱԾ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Фундаментальная библиотека